ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի, ժամը 12:00-ի ընդլայնված նիստի N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում»՝ «Քաղաքական ինստիտուտները և տնտեսական զարգացման որակն ու գերակայությունները ՀՀ-ում» ծրագրի իրականացման** (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյան**) **2021 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվության մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. աշխատանքային խումբն ունեցել է երկու սեմինար-քննարկումներ, որոնց ընթացքում հստակեցվել են ուսումնասիրությունների ուղղությունները, կատարվել է աշխատանքի բաժանում՝ օրացուցային պլանին համապատասխան: Մշակվել են հետագա գործողությունների անհատական ծրագրերը և անելիքները: Մասնավորապես՝ առաջին փուլում ուսումնասիրվել են քաղաքակրթության, քաղաքական ինստիտուտների և տնտեսական զարգացման փոխառնչությունների վերաբերյալ գրականությունը, միջազգային ու հայրենական փորձը, ընդհանրացվել են ՀՀ վիճակագրական նյութերը տնտեսական աճի և որակի վերաբերյալ: Աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

1) Տնտեսական ռազմավարության մշակման նպատակով վերլուծվել են 2010-2020 թթ. կտրվածքով ՀՆԱ աճի տեմպերը և կառուցվածքը, արդյունաբերության աճի տեմպերը և կառուցվածքը, գյուղատնտեսության աճի տեմպերը և կառուցվածքը, ծառայությունների ծավալը և կառուցվածքը, ներդրումների ծավալը, կառուցվածքը և աճի տեմպերը, աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի դինամիկան, գնաճի մակարդակը, բնակչության կենսամակարդակի (աղքատության) ցուցանիշները, եկամուտների բաշխվածությունը (Ջինի գործակից), ներմուծման և արտահանման ծավալը, տնտեսական արդյունավետությունը:

2) Իբրև ռազմավարության հիմք իրականացվելու է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսում՝ ըստ գերակայությունների և տնտեսական կառուցակարգի:

3) Դիտարկվել են քաղաքական ինստիտուտների և տնտեսական զագացման փոխառնչությունները՝ քաղաքակրթության մակարդակի բնութագիրը, միջազգային համեմատություն, քաղաքական ինստիտուտների (պետական կառավարման մարմիններ, ՏԻՄ-եր, հասարակական-քաղաքական կազմակերպություններ) համապատասխանությունը արդի քաղաքակրթական մակարդակին, հանրային կառավարման

բնութագրությունը, համապատասխանությունը քաղաքակրթական արդի մակարդակին, արդյունավետությունը:

4) Քաղաքական ինստիտուտների ազդեցությունը տնտեսական զարգացման և բնակչության կենսամակադակի վրա, գնահատման մեթոդաբանությունը (միջազգային պրակտիկայի վերլուծությամբ):

Վերոնշյալը հնարավորություն կտա բնութագրել քաղաքական ինստիտուտների և տնտեսական, սոցիալական, անվտանգային զարգացման փոխառնչությունների կառուցակարգերը, առանցքային օրինաչափությունները, միջազգային փորձի հաշվառմամբ ՀՀ-ում տիրապետող միտումները: Ինչպես նաև հնարավոր կլինի հետագա աշխատանքների ընթացքում գնահատել հանրային կառավարման ազդեցությունը ՀՀ տնտեսական, սոցիալական և անվտանգային զարգացման վրա: Սակայն թեմայի ֆինանսավորման ծավալի էական կրճատման պատճառով նախատեսված ծրագրային աշխատանքներն իրականացվել են մեկ երրորդի չափով:

Հետազոտության արդյունքներով հրատարակվել են 3 մենագրություն և 7 գիտական հոդված: Ծրագիրը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի հարցման կարգով նիստում (արձանագրություն N 17):

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում»՝ «Քաղաքական ինստիտուտները և տնտեսական զարգացման որակն ու գերակայությունները ՀՀ-ում» ծրագրի իրականացման** (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյան**) **2021 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությանը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե** (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն, կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան